# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար թափառող կենդանիների ստերիլիզացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/46 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի ապրիլի 21-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/46 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մայիսի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** 2026 թվականի մայիսի 8-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված 2-ով հաստատված «Վճարման ժամանակացույց»-ը՝ ըստ 2026 թվականի մայիսի 8-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2026 թվականի ապրիլի 21-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/46 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**